

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Եւ ասէ Աստուած ցԿային.
“Ո՞ր է Հաբէլ եղբայր քո՞”» (Ծնն. Դ. 9):

1915-2015 թթ.…Հայոց Մեծ Եղեռնի հարյուրամյա տարելիցին մնացել է ուղիղ երկու տարի: Մեկ դար առաջ գործված սոսկալի հանցագործության պատմական բովանդակությունը թեեւ փոխված է, սակայն իր դիտումնավորությամբ մարդկային *ցեղի* հանդեպ նախճիրն այսօր դեռեւս շարունակում է արյունով պղծել ցավից ու վշտից աղաղակող Մայր հողը՝ Հոլոքոստ, Բոսնիա, Ռուանդա…

Եւ այս բոլոր սահմռկեցուցիչ տեսարաններին ինչպես ոչ վաղ անցյալում, այնպես էլ այսօր ականատես ենք քրիստոնյաներս, ում համար սպանությունը, մարդու ոչնչացումը ոչ թե լոկ իրավաբանական-քրեական հանցագործություն է, այլ մարդու մեջ արարչավանդ զորությամբ դրված աստվածային պատկերի ոտնահարում: Այս իմաստով քրիստոնեական հավատի սկզբունքային դրույթը շատ հստակ է. ցեղասպանություն է ինչպես մեկ միլիոնի, այնպես էլ մեկի բնաջնջումը: Չէ՞ որ Աբելի սպանությունը լոկ մեկ մարդու ոչնչացում չէր. Աբելի մեջ մարմնացած աստվածպաշտությունը, սերն ու հավատն արմատախիլ անող ձեռքին նույն հաջողությամբ կարող ենք անվանել ցեղասպան յաթաղան, բարբարոս, անտիսեմիտ, հայատյաց, կրոնամոլ, շովինիստ եւն:

Շատ հաճախ Հայոց Եկեղեցու՝ ցեղասպանության հանդեպ դիրքորոշումը «սահմանափակում» ենք լոկ Հայ ազգի արդար պահանջատիրության ու իրավատիրության ծիրից ներս: Անշուշտ, մեկ ու կես միլիոնից ավելի հայերի աննախադեպ սպանդն ազգային-կրոնական պատկանելության հողի վրա ծավալվող ծրագրված ու կանխամտածված սպանություն էր: Բայց հայի ցեղասպանությունը, քրիստոնեական հավատի ու բարոյականության տեսակետից, նաեւ եղբայրասպանություն էր՝ Դայենի ու Աբելի փոխհարաբերության պատկերին արված ուղիղ համեմատականով. «Ամենայն որ ատեայ զեղբայր իւր մարդասպան է» (Ա. Յովհ. Գ. 15): Ցեղասպանության իրականությունը, հետեւաբար, չի վերջանում միայն 1915-1923 թթ. գործված սոսկալի ոճիրներով: Ապա ի՞նչ անուն տանք 1950-ական թվականներից մինչեւ այսօր Թուրքիայում եւ նրա կրտսեր եղբոր՝ Ադրբեջանի բնակչության մեջ ծավալվող եւ օրըստօրե ահագնացող ատելությանը՝ մարդասպանությո՞ւն, պատերազմի ու նոր ցեղասպանության նախադո՞ւռ, թե՞ պարզապես

պատմական եւ կրոնական ճշմարտությունները կուրորեն ու մոլեռանդորեն թաքցնող կրոնախեւություն… Մի՞թե արդեն ցեղասպանություն չէ մոլեռանդությամբ բորբոքվող ու եփվող մտքերի մեջ հարեւան ազգի, մարդու, մարդկային նույն ընտանիքին պատկանող եղբոր հանդեպ որոճացող ատելությունը, մի՞թե միայն գործվելուց հետո է այն դառնում մարդկային ցեղի հանդեպ հանցանք՝ *Ցեղասպանություն*:

Թուրքիան այսօր կանգնած է մեկ այլ, ավելի վտանգավոր ցեղասպանություն գործելու վտանգի առաջ: Յոթ տասնյակ միլիոնից ավելի մարդկանց մեջ սերմանվող ատելությունն իրեն Իսլամի բարոյական սկզբունքների, եւրոպական ու համամարդկային արժեքների կրող հոչակած Թուրքիային ուղղակիորեն դարձնում է ցեղասպանության գաղափարի փոխանցման ու հրահրման ջատագով: Այսօր Թուրքիայում կարծես վերածնվում են Իսլամի կրոնական սկզբունքները, աշխուժանում մահմեդական համայնքները, որոնց ուղղափառ մուսուլման *եղբայրները* բոլոր մարդկանց իրար եղբայր են համարում: Հարց է ծագում. ի՞նչ կասեն, ուրեմն, թուրք ներկայիս ղեկավարները (որոնց ի դեպ մի ժամանակ ցույցերի ընթացքում արտասանած կրոնական բանաստեղծությունների համար բանտ էին նստեցնում եւ որոնք այսօր շատ հաճախ իրենց *իթթիհատական՝* երիտթուրքական ժողովրդավարության ժառանգներ են համարում), եթե իմանան, որ Ղուրանում՝ Ալլահի գրքում, անմեղի սպանությունը նույնպես դատապարտվում է՝ իբրեւ մեծագույն հանցանք: Ի՞նչ կզգան, եթե լսեն Մուհամմեդի խոսքերը.

«Նա, ով կսպանի հոգի մի կենդանի
Երկրավոր փառքից ու նախանձից դրդված,
Կնմանվի ողջ մարդկությունն սպանողի:
Իսկ նա, ով կփրկի հոգին այն,
Կնմանվի ողջ մարդկությունը փրկողին» (Սուրահ Ե. 32):

Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցը ժամանակային առումով շատ բան չի փոխի հայ կյանքում: Բայց ավելի իրական ու տեսանելի կդարձնի Թուրքիայի հորիզոններում սավառնող ցեղասպան-մարդասպանի ուրվականին, որն ինչքան սնվի թուրքական իշխանությունների ժիստոդական ու կեղծ «պատմասիրությամբ», այնքան ավելի ինքն իրեն զորացած ու ամրագրված պիտի զգա թուրքական հասարակության մեջ: Կրոնական զարթոնք ապրող Թուրքիայում այսօր թերեւս առավել բարձր պիտի հնչեն այդ նույն կրոնական արժեքների ու սկզբունքների մաքրագործման անհրաժեշտությունը, սեփական կրոնամշակութային գիտակցության պարպումն ու ախտազերծումն ազգայնամոլ տարրերից ու սկզբունքներից: Ամենայն Հայոց Հայրապետի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի համատեղ հայտարարությունը թերեւս լավագույն առիթ պիտի դառնա՝ առավել վճռականորեն արթնացնելու միլիոնավոր թուրք մահմեդականների կրոնական խղճմտանքը: Հայոց սրբատեղիների ու եկեղեցիների, բռնագրավված մյուս կալվածքների ու մշակութային-եկեղեցական արժեքների վերադարձը հայ ժողովրդին կարող է դառնալ մինչեւ օրս ցեղասպանի կայենական պիտակով որակված Թուրքիայի ներքին, արդեն գենետիկ դարձած ցեղասպանական բարդույթի վերացման առաջին քայլը: Համենայն դեպս, եթե Թուրքիան որոշել է ընթանալ Ալլահի ուղեգծած ճանապարհով եւ եւրոպական համամարդկային արժեքների ջատագովությամբ, ապա պետք է նրան հնարավորինս ցույց տալ այդ ուխտով ստանձնած պարտավորություններն ու դեռեւս չիրականացրած պարտականությունները Հայ ազգի եւ համայն մարդկության առաջ: